


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2016 թվականի սեպտեմբերին


(վերլուծություն)

2016 թվականի սեպտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 14262 գործարք, որոնց քանակը 2016 թվականի օգոստոս ամսվա համեմատ նվազել է 5.1 %-ով, իսկ 2015 թվականի սեպտեմբերի համեմատ՝ 8.1 %-ով:

2016 թվականի սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4041 օտարման գործարքի 71.9 %-ը կազմել է առուվաճառքը, 27.8 %-ը՝ նվիրատվությունը և 0.3 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքի քանակի 36.0 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.5 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2016 թվականի սեպտեմբերին, 2016 թվականի օգոստոսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքները նվազել են 7.9 %-ով, իսկ 2015 թվականի սեպտեմբերի համեմատ՝ աճել 0.05 %-ով:

2016 թվականի սեպտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 66.2 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2016 թվականի սեպտեմբերին, 2016 թվականի օգոստոսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 16.4 %-ով, իսկ 2015 թվականի սեպտեմբերի համեմատ՝ 17.9 %-ով:

2016 թվականի սեպտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	սեպտեմբեր 2015 թ.	սեպտեմբեր 2016 թ.	օգոստոս 2016 թ.
Կենտրոն	428000	428250	428250
Արաբկիր	356700	357350	357350
Քանաքեռ-Զեյթուն	282800	283150	283150
Նոր Նորք	253400	254300	254250
Ավան	260800	261800	261800
Էրեբունի	252150	252350	252350
Շենգավիթ	257300	257750	257700
Դավթաշեն	276150	276900	276850
Աջափնյակ	250300	251100	251100
Մալաթիա-Սեբաստիա	243450	244200	244200
Նուբարաշեն	156800	157500	157450

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի սեպտեմբերին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2016 թվականի օգոստոսի համեմատ՝ աճել է 0.02%-ով:

2016 թվականի սեպտեմբերին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 316 բնակարան, որոնց քանակը 2016 թվականի օգոստոսի համեմատ նվազել է 17.5 %-ով, իսկ 2015 թվականի սեպտեմբերի համեմատ՝ 5.7 %-ով:

2016 թվականի սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		սեպտեմբեր 2015 թ.	սեպտեմբեր 2016 թ.	օգոստոս 2016 թ.
Արագածոտն	Աշտարակ	116000	116050	116050
	Ապարան	57950	58600	58500
	Թալին	66250	66850	66850
Արարատ	Արտաշատ	97950	98950	98900
	Մասիս	115800	115800	115800
	Վեդի	101450	101750	101750
	Արարատ	76900	77550	77550

Արմավիր	Վաղարշապատ	154100	154200	154200
	Արմավիր	121200	121250	121250
	Մեծամոր	87550	87600	87600
Գեղարքունիք	Սևան	99400	99400	99400
	Գավառ	60250	60650	60600
	Մարտունի	107700	107700	107700
	Վարդենիս	44900	45300	45300
	Ճամբարակ	28700	28800	28750
Լոռի	Վանաձոր	88500	88600	88600
	Ստեփանավան	74600	74750	74750
	Սպիտակ	99800	99850	99850
	Ալավերդի	55300	55900	55900
	Տաշիր	47350	47400	47400
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
Կոտայք	Ախթալա	20500	20500	20500
	Արուսեան	155100	155150	155150
	Նոր Հաճն	128550	128550	128550
	Բյուրեղավան	108200	108250	108250
	Եղվարդ	109400	109900	109900
	Հրազդան	63800	63900	63900
	Ծաղկաձոր	292400	292400	292400
	Չարենցավան	85500	85500	85500
Շիրակ	Գյումրի	109250	109450	109450
	Արթիկ	66850	67400	67400
	Մարալիկ	40850	41150	41150
Սյունիք	Գորիս	123100	123950	123850
	Կապան	94100	95450	95350
	Սիսիան	92000	92200	92200
	Մեղրի	82300	83300	83200
	Ագարակ	47300	47750	47750
	Քաջարան	94650	94950	94950
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95000	95100	95100
	Եղեգնաձոր	125600	126350	126350
	Ջերմուկ	112950	113300	113300
Տավուշ	Դիլիջան	115000	115600	115600
	Իջևան	118400	118550	118550
	Բերդ	60300	60450	60450
	Նոյեմբերյան	50150	50400	50400
	Այրում	31850	31900	31900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2016 թվականի օգոստոսի համեմատ՝ մնացել է անփոփոխ:

2016 թվականի սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 379 առուվաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 110 գործարք, մարզերում՝ 269 գործարք: 2016 թվականի սեպտեմբերին, 2016 թվականի օգոստոսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 3.3 %-ով, ընդ որում, Երևանում՝ աճել 2.8 %-ով, իսկ մարզերում՝ նվազել 5.6 %-ով: 2016 թվականի սեպտեմբերին 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 24.3 %-ով, ընդ որում, Երևանում՝ 37.5 %-ով, իսկ մարզերում՝ 19.6%-ով:

2016 թվականի սեպտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	սեպտեմբեր 2015 թ.	սեպտեմբեր 2016 թ.	օգոստոս 2016 թ.
Կենտրոն	476100	476350	476350
Արաբկիր	383000	383200	383200
Քանաքեռ-Զեյթուն	295000	295000	295000
Նորք-Մարաշ	319200	319300	319300
Ավան	270500	270600	270600
Էրեբունի	239750	239750	239750
Շենգավիթ	255000	255000	255000
Դավթաշեն	276000	276100	276100
Աջափնյակ	250050	250100	250100
Մալաթիա-Սեբաստիա	238000	238100	238100
Նուբարաշեն	150800	150800	150800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի սեպտեմբերին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի օգոստոսի համեմատ՝ մնացել է անփոփոխ։

2016 թվականի սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		սեպտեմբեր 2015 թ.	սեպտեմբեր 2016 թ.	օգոստոս 2016 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	136250	136250
	Ապարան	60050	60050	60050
	Թալին	69250	69250	69250
Արարատ	Արտաշատ	100000	100100	100100
	Մասիս	115100	115100	115100
	Վեդի	102300	102300	102300
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153150	153150
	Արմավիր	107000	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94950	94950	94950
	Գավառ	57100	57100	57100
	Մարտունի	96100	96200	96200
	Վարդենիս	41000	41150	41150
	Ճամբարակ	31100	31100	31100

Լողի	Վանածոր	100650	100900	100900
	Ստեփանավան	91000	91200	91200
	Սպիտակ	114000	114050	114050
	Ալավերդի	50200	50300	50300
	Տաշիր	51900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Աբովյան	157300	157350	157350
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	82600	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	83000	83000	83000
Շիրակ	Գյումրի	119150	119350	119250
	Արթիկ	63200	63450	63450
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	130050	130050
	Կապան	100500	100750	100750
	Սիսիան	96500	96500	96500
	Մեղրի	84500	84650	84650
	Ագարակ	46900	46950	46950
	Դաստակերտ	11610	11610	11610
Վայոց ձոր	Վայք	90150	90150	90150
	Եղեգնաձոր	116750	116750	116750
	Ջերմուկ	131300	131300	131300
Տավուշ	Դիլիջան	115100	115750	115650
	Իջևան	123200	123250	123250
	Բերդ	60100	60100	60100
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի օգոստոսի համեմատ՝ մնացել է անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2016 թվականի սեպտեմբերին հանրապետությունում օտարվել է 1451 միավոր (653.97 հա) հող, որից Երևանում՝ 75 միավոր (5.59 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 795 միավոր (576.78 հա), որից Երևանում՝ 2 միավոր (0.20 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 452 միավոր (45.52 հա), որից Երևանում՝ 35 միավոր (1.77 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 154 միավոր (10.06 հա), որից Երևանում՝ 34 միավոր (3.15 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 15 միավոր (19.69 հա), որից Երևանում՝ 4 միավոր (0.48 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 6 միավոր (1.15 հա),

- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 17 միավոր (0.49 հա),
- ջրային հող՝ 12 միավոր (0.28 հա) ընդհանուր մակերեսով:

2016 թվականի սեպտեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1187 միավորի (528.96 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 68 միավոր (5.07 հա), նվիրատվության գործարք՝ 256 միավորի (122.37 հա), որից Երևանում՝ 5 միավոր (0.36 հա) և փոխանակության գործարք՝ 8 միավորի (2.64 հա), որից Երևանում՝ 2 միավոր (0.16 հա):

Հանրապետությունում 2016 թվականի սեպտեմբերին, 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակն աճել է 19.4 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակն աճել է 19.9 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 14.1 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 44.4 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 133.95 հա, որից 130.16 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 36.3 %-ը կամ 431 միավորը (148.59 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 22 միավոր (0.80 հա), իսկ 63.5 %-ը կամ 754 միավորը (380.35 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 45 միավոր (4.28 հա): 2016 թվականի սեպտեմբերին հանրապետությունում գրանցվել է կառուցապատման իրավունքի վաճառքի 2 գործարք /0.02 հա/:

Ստորև ներկայացված է 2016 թվականի սեպտեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	3	0.35	9	0.26	10	0.19	1	0.02	1	0.13	24	1.43	19	2.70
Արագածոտն	55	21.92	2	0.06	3	0.01	10	0.32	66	59.58	0	0.00	27	3.17	1	0.01
Արարատ	26	30.93	1	0.51	6	0.46	7	0.09	61	26.01	0	0.00	42	3.77	3	0.18
Արմավիր	11	5.47	0	0.00	1	0.002	2	0.01	63	124.69	0	0.00	38	3.72	4	0.06
Գեղարքունիք	1	0.12	1	0.01	5	0.36	16	1.55	21	12.38	0	0.00	68	7.47	2	0.08
Լոռի	2	0.40	1	0.04	3	0.01	11	0.37	14	10.40	0	0.00	8	0.37	6	0.09
Կոտայք	22	19.51	1	0.36	23	0.39	11	0.41	114	51.65	0	0.00	57	4.13	5	0.38
Շիրակ	74	15.98	1	0.38	7	0.26	15	1.55	28	26.00	0	0.00	7	0.82	2	0.03
Սյունիք	19	15.89	1	0.06	6	0.25	0	0.00	17	20.56	0	0.00	21	1.36	5	0.09
Վայոց ձոր	23	28.56	0	0.00	0	0.00	0	0.00	11	16.96	0	0.00	7	0.50	0	0.00
Տավուշ	1	0.20	1	0.10	3	0.11	8	0.36	2	0.26	0	0.00	5	0.51	1	0.09
Ընդամենը	234	138.98	12	1.87	66	2.11	90	4.85	398	348.51	1	0.13	304	27.25	48	3.71

Ստորև ներկայացված է 2016 թվականի սեպտեմբերին պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների և ջրային հողերը.

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր								բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	9	0.39	2	0.33	6	0.05	1	0.01	13	0.40	0	0.00	1	0.01	3	0.21	9	0.18
Արագածոտն	9	0.19	0	0.00	0	0.00	9	0.19	14	14.57	8	14.38	2	0.06	3	0.01	1	0.12
Արարատ	5	0.13	0	0.00	1	0.10	4	0.03	34	28.86	25	27.93	1	0.51	5	0.36	3	0.06
Արմավիր	1	0.002	0	0.00	1	0.002	0	0.00	13	5.48	11	5.47	0	0.00	0	0.00	2	0.01
Գեղարքունիք	7	0.08	1	0.01	1	0.02	5	0.05	16	1.96	1	0.12	0	0.00	4	0.33	11	1.51
Լոռի	7	0.05	0	0.00	3	0.01	4	0.04	10	0.77	2	0.40	1	0.04	0	0.00	7	0.33
Կոտայք	6	0.10	0	0.00	6	0.10	0	0.00	51	20.56	22	19.51	1	0.36	17	0.28	11	0.41
Շիրակ	17	1.99	1	0.38	3	0.07	13	1.54	8	1.40	2	1.19	0	0.00	4	0.20	2	0.01
Սյունիք	1	0.002	0	0.00	1	0.002	0	0.00	25	16.20	19	15.89	1	0.06	5	0.25	0	0.00
Վայոց ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	23	28.56	23	28.56	0	0.00	0	0.00	0	0.00
Տավուշ	4	0.10	0	0.00	2	0.09	2	0.01	8	0.47	0	0.00	1	0.10	1	0.02	6	0.35
Ընդամենը	66	3.03	4	0.72	24	0.44	38	1.87	215	119.23	113	113.45	8	1.14	42	1.66	52	2.98

2016 թվականի սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 121 գործարք (25.53 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2016 թվականի սեպտեմբերին, 2015 թվականի սեպտեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 44.7 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 7.7 %-ով, իսկ մարզերում աճել է 47.8 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 2.2 անգամ, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 20.0 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 11.9 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 8.0 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2016 թվականի սեպտեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Ստավելագույն	Միջին			Նվազագույն	Ստավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	8	14.38	40.3	475.8	219.2	29	12.57	365.0	12000.0	3332.4
Ապարան						2	0.26	86.5	2727.3	632.7
Թալին						22	18.67	93.6	5494.5	720.0
Ծաղկահովիտ						13	28.10	79.5	1000.0	400.0
Արարատի մարզ										
Արտաշատ	11	2.47	131.1	3345.8	1003.1	27	8.15	335.1	10833.3	2685.0
Մապիս	2	0.99	85.2	253.1	169.2	18	7.65	200.0	11904.8	3385.1
Վեդի	12	24.48	97.3	996.4	272.7	16	10.20	207.0	10795.1	1984.2
Արմավիրի մարզ										
Արմավիր	2	0.56	1058.4	1058.4	1058.4	17	17.44	294.3	9090.0	1370.5
Բաղրամյան	2	2.74	71.8	78.0	74.9	14	89.28	90.6	2561.1	900.0
Վաղարշապատ	7	2.17	59.8	1682.5	786.2	32	17.97	444.4	11764.7	1963.1
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						7	1.29	199.8	1875.0	510.0
Ճամբարակ								60.5	953.3	350.0
Մարտունի						2	0.17	51.1	2850.0	770.0
Սևան	1	0.12	990.0	990.0	990.0	3	1.36	52.2	2134.8	355.0
Վարդենիս						9	9.56	41.2	2575.1	380.0
Լոռու մարզ										
Ալավերդի	2	0.40	670.7	1102.1	886.4			170.4	6424.2	555.0
Գուգարք						1	0.09	234.6	6065.9	810.0
Սպիտակ								250.0	5555.5	675.0
Ստեփանավան						4	1.35	90.6	1686.6	405.5
Տաշիր						5	2.15	45.3	1384.4	185.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	9	7.57	87.5	855.7	409.1	28	18.86	279.3	11942.7	4045.5
Եղվարդ	10	8.51	73.7	1237.6	293.3	64	18.71	174.4	11971.8	2595.5
Հրազդան	3	3.44	140.8	328.5	246.3	21	13.77	130.5	10256.4	1005.8
Շիրակի մարզ										
Ախուրյան						4	3.65	252.0	1693.1	670.0
Ամասիա	1	1.08	295.3	295.3	295.3	4	7.09	40.9	261.0	140.0
Անի						17	11.89	110.6	546.9	458.7
Աշոցք								58.5	215.8	138.5
Արթիկ	1	0.11	828.0	828.0	828.0	3	3.37	79.4	1428.6	525.3
Սյունիքի մարզ										
Գորիս	1	0.43	162.8	162.8	162.8	5	4.86	92.6	1023.2	760.0
Կապան	3	1.31	143.8	412.5	323.0	2	1.19	120.0	841.6	452.3
Մեղրի	14	14.03	37.1	806.9	225.0			193.0	3000.0	810.0
Սիսիան	1	0.12	1550.0	1550.0	1550.0	10	14.52	46.3	1977.4	568.3
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	2	0.47	1013.13	1101.8	1057.5	6	15.56	125.0	10000.0	1750.0
Վայք	21	28.10	34.4	631.2	191.8	5	1.40	58.8	1430.7	612.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	0.11	213.3	3783.8	690.0
Իջևան						1	0.15	267.5	9454.5	1562.5
Նոյեմբերյան								46.7	7368.4	976.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2016 թվականի սեպտեմբերին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ ²)	պայմանագրային գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ ²)	շուկայական գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Ստավելագույն	Միջին			Նվազագույն	Ստավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	3	77.1	3428.6	5209.7	4356.7	21	18147.5	130.7	22200.0	2589.5
Ապարան						2	2010.0	124.1	609.6	389.3
Թային						4	11520.0	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ								60.0	214.3	93.5
Արարատի մարզ										
Արտաշատ	2	1973.7	537.9	538.3	538.1	12	12966.0	173.9	7140.3	904.0
Մասիս	3	1638.8	2951.8	3029.3	2998.7	23	16305.8	187.5	25000.0	1206.5
Վեդի						7	8447.0	126.1	5000.0	664.3
Արմավիրի մարզ										
Արմավիր						11	9872.0	131.6	9090.9	1215.5
Բաղրամյան								100.0	833.3	240.0
Վաղարշապատ						27	27286.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	2043.0	192.5	192.5	192.5	2	1570.0	186.6	1084.3	683.6
Ճամբարակ								71.3	2286.2	147.0
Մարտունի	1	1200.0	220.0	220.0	220.0	63	67259.0	119.3	5000.0	284.0
Սևան	1	43.1	1493.0	1493.0	1493.0	1	2329.6	240.0	3110.4	347.0
Վարդենիս	1	56.0	600.0	600.0	600.0	2	3535.0	72.5	987.2	150.5
Լոռու մարզ										
Ալավերդի						2	201.5	114.3	1388.9	217.0
Գուգարք						2	1016.0	77.9	14083.3	1259.0
Սպիտակ								104.9	1348.3	198.3
Ստեփանավան						4	2489.9	88.2	1666.7	176.0
Տաշիր								45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	13	1605.7	1507.5	5209.5	3689.6	33	21008.3	264.5	35353.5	1948.0
Եղվարդ						17	15799.6	173.6	27000.0	2853.0
Հրազդան	4	1230.0	1431.1	3904.8	2387.1	7	4522.0	117.7	34848.5	1318.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	2	951.4	244.9	3181.8	1713.4	1	1106.0	113.6	18750.0	332.1
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի						1	2182.0	67.9	180.6	214.0
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ	2	1000.0	580.8	580.8	580.8	5	4940.0	111.8	5000.0	217.5
Սյունիքի մարզ										
Գորիս						1	740.0	112.2	1700.0	367.4
Կապան	1	34.3	2600.0	2600.0	2600.0	1	29.5	67.9	2638.9	360.0
Մեղրի	4	2485.3	290.4	607.4	528.1			68.5	632.9	270.0
Միսիան						19	12863.0	123.5	875.0	258.5

Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						6	4000.0	96.7	7659.6	507.0
Վայք						1	990.0	120.7	1448.3	250.0
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	127.3
Իջևան						4	4978.0	74.1	14423.1	512.4
Նոյեմբերյան	1	199.3	1100.4	1100.4	1100.4	1	84.5	125.0	1948.1	253.5

2016 թվականի սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 612 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.3 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 81.7 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2016 թվականի սեպտեմբերին, 2016 թվականի օգոստոսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 6.8 %-ով, իսկ 2015 թվականի սեպտեմբերի համեմատ՝ աճել 9.9 %-ով:

2016 թվականի սեպտեմբերին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 32 բնակարանի, 51 անհատական բնակելի տան, 249 հասարակական և 56 արտադրական նշանակության օբյեկտի, 217 հողի, 6 ավտոտնակի և 1 այգետնակ վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, սերվիտուտի և անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2016 թվականի սեպտեմբերին Երևան քաղաքում հողերի նկատմամբ գրանցված 4 վարձակալության գործարքի քանակը 2016 թվականի օգոստոսի համեմատ աճել է 2.0 անգամ, իսկ 2015 թվականի սեպտեմբերի համեմատ՝ նվազել 55.6 %-ով:

2016 թվականի սեպտեմբերին հանրապետությունում վարձակալված 1077.07 հա հողից 0.63 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 1076.44 հա հողերից 1024.83 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 34.97 հա արդյունաբերական օբյեկտների, 0.11 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հող վարձակալվել է Շիրակի մարզում՝ 617.93 հա, որից 613.57 հա գյուղատնտեսական նշանակության:

2016 թվականի սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1546 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումների քանակի 10.8 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2016 թվականի օգոստոսի համեմատ, նվազել է 7.2 %-ով, իսկ 2015 թվականի սեպտեմբերի համեմատ՝ աճել 6.8 %-ով:

Գրավադրման գործարքն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (50.8 %), անհատական բնակելի տների (20.1 %), հասարակական նշանակության օբյեկտների (17.0 %) և հողերի (8.0 %) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 869 գրավադրման գործարքից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2016 թվականի օգոստոսի համեմատ նվազել է 11.3 %-ով, իսկ 2015 թվականի սեպտեմբերի համեմատ՝ աճել 1.4 %-ով:

2016 թվականի սեպտեմբերին հանրապետությունում գրավադրվել է 141.24 հա հող, որից 3.84 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողի 131.22 հա կամ 92.9 %-ը գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հող գրավադրվել է Վայոց ձորի մարզում՝ 88.46 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2016 թվականի սեպտեմբերին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 157 գործարք: 2016 թվականի սեպտեմբերին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2016 թվականի օգոստոսի համեմատ, նվազել է 6.5 %-ով, իսկ 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճել 29.8 %-ով:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 106 գործարք, որը 2016 թվականի օգոստոսի համեմատ նվազել է 10.9 %-ով, իսկ 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճել 29.3 %-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2016 թվականի օգոստոսի համեմատ, աճել է 4.1 %-ով, իսկ 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 30.8 %-ով :

2016 թվականի սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 1974 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2016 թվականի օգոստոսի համեմատ, նվազել է 0.6 %-ով, իսկ 2015 թվականի սեպտեմբերի համեմատ՝ աճել 10.1 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումներում կազմել է 13.8 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (15.6 %):

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե